

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 8/4

14 փետրվարի 2013թ.

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 01.02.2013թ-ի նիստում քննության է առնվել <Վիկտորիա-Ս> ՍՊԸ 19.01.2013թ. դիմում-գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ Մաշտոցի ՀՏ 27.11.2012թ. թիվ 2120041 ստուգման ակտի դեմ: Արդյունքում ընդունվել է որոշման նախագիծ, որի համաձայն վերոգրյալ ստուգման ակտը թողնվել է անփոփոխ: Մասնավորապես.

համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ Մաշտոցի ՀՏ պետի 24.10.2012թ. թիվ 2120041 հանձնարարագրի ՀՀ օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում <Վիկտորիա-Ս> ՍՊԸ-ում կատարվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում 27.11.2012թ-ին կազմվել է թիվ 2120041 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել 150.000 դրամ:

Ստուգման ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է.

հարկային տեսուչ Վոլոդյա Սահակյանի կողմից 17.11.2012թ-ին ժամը 11:46-ին ք.Երևան, Մելքումովի 78 հսցեում գտնվող խանութից կատարվեց հսկիչ գնում 6000 դրամի չափով՝ 1 հատ պետլի, որի դիմաց վճարումը կատարվեց կանխիկ դրամով: Փոխարինող պաշտոնատար անձ էղուարդ Գևորգյանը գումարը չմուտքագրեց ՀԴՄ և համապատասխան գումարի կտրոն չտրամադրեց: Այնուհետև ժամը 11:48-ին ՀԴՄ-ից դուրս բերվեց <Z> հաշվետվություն՝ 0 դրամ ընդհանուր գումարով, որում կատարված վճարման արժեքը ներառված չէր: <Z> հաշվետվությունը դուրս բերելուց հետո կատարված վճարման արժեքը՝ 6000 դրամը, ժամը 11:50-ին մուտքագրվեց ՀԴՄ, դուրս բերվեց կտրոն և ժամը 11:50-ին նորից դուրս բերվեց <Z> հաշվետվություն 6000 դրամ գումարով:

Գնված ապրանքները ստուգումն իրականացնող հարկային ծառայողների կողմից ետ վերադարձվեցին տնտեսվարողին և ետ ստացվեց հսկիչ գնման գումարը:

Ստուգմամբ պարզվեց, որ տնտեսվարող սուբյեկտի կողմից խախտվել են ՀՀ կառավարության 26.08.2004թ. թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 19-րդ կետի <բ> ենթակետի պահանջները, որի համար կիրառվել է ՀՀ հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին> ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված տուգանքը՝ գումարով 150.000 դրամ:

<Վիկտորիա-Ս> ՍՊԸ գանգատում մասնավորապես նշված է.

Մաշտոցի ՀՏ տեսուչ Վոլոդյա Սահակյանի կողմից 17.11.2012թ., շաբաթ օրը, ժամը 11:46-ին կատարվեց հերթական խարդախությունը: Այդ օրը, որպես հերթական հաճախորդ ցանկացավ գնել հին, օգտագործված ավտոմեքենայի մաս /պետլի/ և խանութում սեղանի վրա թողնելով 6000 դրամ, վերցրեց պետլին ասելով, թե պետք է այն ցույց տա հարևանությամբ գործող մեքենաների վերանորոգման արհեստանոցի վարպետին: Խանութից դուրս գալով և վերադառնալով /այդ պահին խանութի աշխատակիցը զբաղված լինելով ուրիշ հաճախորդի հետ խնդրել է մեկ րոպե սպասել/ անմիջապես ցույց է տվել ծառայողական վկայականը և Մաշտոցի ՀՏ պետի 24.10.2012թ. թիվ 210041 հանձնարարագիրը, անձամբ, իր ձեռքով առանց հարցնելու ՀԴՄ-ից դուրս է բերել հաշվետվությունը 0 դրամ ընդհանուր գումարով և հայտնել, թե կատարվել է ՀԴՄ շահագործման կանոնների խախտում:

Կատարելով իր <սև գործը> առանց խոսքի և պարզաբանման արագ հեռացել է: Խանութի աշխատակիցը՝ տնօրենի փոխարինող անձ էղուարդ Գևորգյանը ուղղակի շշմել է և զարմացել, թե՛ այս ինչ է կատարվում: Այնուհետև, 2012թ. նոյեմբերի 19-ին, երկուշաբթի օրը, երեք տեսուչների ստորագրությամբ ներկայացրել են այսպես կոչված ակտի նախագիծ /ի դեպ

տեսուչներից մեկը Տարոն Գևորգյանը պարզվել է, որ ներկայումս նույնիսկ տեսչությունում չի աշխատում: Ընկերության տնօրենի փոխարինող անձ՝ էդուարդ Գևորգյանը հանդիմանել է, որ այս ամենը սարքովի գործ է, տեսուչները պատասխանել են, որ այս ընդամենը նախագիծ է, ասելով, որ հետո կխոսենք, թողնելով ակտի նախագծի օրինակը և արագ հեռացել: Սակայն, 2012թ. նոյեմբերի 27-ի ամսաթվով տեսուչների կողմից կազմվել է ակտ և Հայ Փոստի միջոցով առաքվել 29.11.2012թ. կնիքով, որը հասցեատիրոջը հանձնվել է 2012թ. նոյեմբերի 30-ին:

Կասկածելով տեսուչների կողմից կատարվող խարդախությունը էդուարդ Գևորգյանը չի ստորագրել ակտի օրինակը, դիմումով դիմել է հարկային տեսչության պետին, որպեսզի կանխվի տեսուչների անօրինական վարքագիծը: Երկրորդ անգամ դիմելուց հետո տեսչության պետի կողմից 25.12.2012թ. գրությամբ պատասխանվել է, որն իրականության հետ կապ չունի:

Եթե ուշադրություն դարձնեք ակտի նախագծում, ակտի բովանդակության, ինչպես նաև գրության մեջ ամփոփված ամսաթվերին և ժամային ժամկետներին ամեն ինչ պարզ կդառնա: Սուտ է նաև գրության մեջ նշված այն հանգամանքը, որ իբր կազմվել է ապրանքների ետ ընդունման արձանագրություն, այդպիսի արձանագրություն ակտին չի կցված: Սա ևս խաբեություն է, որը կրկնվել է նաև հիմնական ակտի մեջ:

2012թ. դեկտեմբերի 28-ին Մաշտոցի ՀՏ իրավաբանի կողմից իմ բնակության հասցեի վրա հասցեագրվել է թերի, առանց համարի, չկնքված արձանագրություն և ծանուցագիր, որոնք Հայ Փոստից ստացել են 2013թ. հունվարի 8-ին և հաջորդ օրվա համար ժամը 11:00-ին, որպես վարչական պատասխանատվության ենթարկվող անձ, հրավիրվել են վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի քննությանը:

2013թ. հունվարի 9-ին առավոտյան ժամը մոտ 10-ին հեռաձայնել են և հայտնել, որ նախ ներկայանալ չեմ կարող հիվանդ լինելու պատճառով և այնուհետև հարկային տեսչության կեղծ, խախտումներով արձանագրված ակտը համարում եմ ապօրինի, որի համար ժամանակին տեսչության պետին երկու դիմումներով տեղյակ ենք պահել: Փոխանակ վերոգրյալ արձանագրությունները և ծանուցագրերը հասցեագրվել **<Վիկտորիա-Ս>** ՄՊԸ Մելքունովի փող. 78 հասցեով, տնօրենի փոխարինող անձ էդուարդ Գևորգյանին, չգիտես ինչի այն հասցեագրվել ինձ:

Նույնիսկ այս պարագայում ես, ինչպես նաև էդուարդ Գևորգյանը հրաժարվում ենք ներկայանալ, ստորագրել և ստանալ ինչ որ անհեթեթ փաստաթուղթ:

« ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով ընկերության տնօրենի և ստուգումն իրականացրած անձանց ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ եզրակացության, որ բողոքը հիմնավոր չէ:

Քննարկման ընթացքում ստուգումն իրականացրած պաշտոնատար անձինք նշեցին, որ հարկային տեսուչ Վոլոդյա Սահակյանի կողմից 17.11.2012թ-ին ժամը 11:46-ին ք.Երևան, Մելքունովի 78 հսցեում գտնվող խանութից կատարվել է հսկիչ գնում 6000 դրամի չափով՝ 1 հատ պետլի, որի դիմաց վճարումը կատարվել է կանխիկ դրամով: Ընկերության տնօրենին փոխարինող պաշտոնատար անձ էդուարդ Գևորգյանը գումարը չի մուտքագրել ՀԴՄ և համապատասխան գումարի կտրոն չի տրամադրել: Այնուհետև ժամը 11:48-ին ՀԴՄ-ից դուրս է բերվել <Z> հաշվետվություն՝ 0 դրամ ընդհանուր գումարով, որում կատարված վճարման արժեքը ներառված չի եղել: <Z> հաշվետվությունը դուրս բերելուց հետո կատարված վճարման արժեքը ժամը 11:50-ին մուտքագրվել է ՀԴՄ, դուրս է բերվել կտրոն և ժամը 11:50-ին նորից դուրս է բերվել <Z> հաշվետվություն:

Գնված ապրանքը ստուգումն իրականացնող հարկային ծառայողների կողմից ետ է վերադարձվել և ետ է ստացվել հսկիչ գնման գումարը: Փաստի վերաբերյալ 17.11.2012թ-ին կազմվել է հսկիչ գնումների արդյունքում վաճառված ապրանքների ետ ընդունման թիվ 2120041 արձանագրությունը:

Ինչ վերաբերվում է ընկերության գանգատում նշված այն պնդմանը, որ գնումը կատարվել է 17.11.2012թ-ին՝ շաբաթ օրը, ապա այս կապակցությամբ նշվեց, որ « ԿԱ ՊԵԿ

աշխատակազմի ղեկավարի 16.11.2012թ-ի թիվ 2/1787-Ա հրամանի համաձայն, 2012թ-ի նոյեմբերի 17-ը ստուգումն իրականացրած պաշտոնատար անձանց համար հայտարարվել է աշխատանքային օր:

Հանձնաժողովը գտնում է, որ քննարկվող դեպքում ընկերության կողմից խախտվել են ՀՀ կառավարության 26.08.2004թ. թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 19-րդ կետի <բ> ենթակետի պահանջները, որի համար կիրառվել է <Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին> ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պատասխանատվության միջոցը:

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 10-ի <Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին> N 1361-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի, Հանձնաժողովի որոշման նախագիծը ուղարկվել է վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման խորհուրդ (այսուհետ՝ Գանգատարկման խորհուրդ): Որոշման նախագծի վերաբերյալ Գանգատարկման խորհուրդը տվել է դրական եզրակացություն:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

### ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Ստուգման ակտը թողնել անփոփոխ:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



S.ԲԱՐՍԵԴՅԱՆ